ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
Ն ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-21/3

ք. Երևան «30» «12» 2020թ.

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, գործելով Հայաստանի Հանրապետության անունից, ի դեմս ծառայության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար՝ Արտակ Ղազարյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Անուշ Պետրոսյան» ԱՁ-ն, ի դեմս տնօրեն Անուշ Պետրոսյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 3000000 (երեք միլիոն) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է՝ 450000 (չորս հարյուր հիսուն հազար) Հհ դրամ

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է՝ 995000 (ինը հարյուր իննսունհինգ հազար) ՀՀ դրամ:

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Պայմանագիրը և հավելվածները կազմված են 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի

կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն	Անուշ Պետրոսյան Ա/Ձ
Ք. Երևան, Արշակունյաց-63	ք. Երևան, Արշակունյաց 5
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011175016	Հ/Հ 1570004526880100
ՀՎՀՀ 02204739	ՀՎՀՀ 49557658
ԲԿ ծառայություն Ա. Աղաջանյան	
---------------- (ստորագրություն)	Տնօրեն ---------------- Ա. Պետրոսյան (ստորագրություն)

Հավելված N 1
«30» «12» 2020 թ. կնքված
ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-21/3 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	50311120/502	ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար անհրաժեշտ համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների ցուցակը՝ գնացուցակը, ներկայացվում է կից N1 հավելվածով: Գնման ընթացակարգի մասնակիցները գնային առաջարկը ներկայացնում են գնացուցակի ընդհանուր գնով: Ծառայությունների մատուցման ընթացքում՝ 1) Վերանորոգման և լիցքավորման ենթակա սարքավորումների տեղափոխումը պետք է իրականացվի Կատարողի կողմից, հայտ ներկայացնելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: 2) Սպասարկում անցած քարթրիջները, պատվիրատուի կողմից կընդունվեն՝ ստուգված և տվյալ քարթրիջներով տպված նմուշի առկայության դեպքում : 3) Լիցքավորված և վերանորոգված քարթրիջների վրա պետք է նշվի լիցքավորման ամսաթիվը և փոխարինված դետալների անվանումները: 4) Սարքերի կամ վնասված քարտրիջների թերությունների հայտնաբերումը Կատարողի կողմից պետք է կատարվի և Պատվիրատուին տեղեկացվի մեկ աշխատանքային օրվա ընթացքում: 5) Վերանորոգման և լիցքավորման աշխատանքների առավելագույն տևողությունը երեք աշխատանքային օր:	ՀՀ դրամ	3000000	1	ք. Երևան,	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 25.12.2021թ.

Հավելված 1

Գնացուցակ

Հ/Հ	Ծառայության անվանումը	Առավելագույն միավորի գինը, ներառյալ ԱԱՀ-ն, ՀՀ դրամներով
	1. Համակարգիչների սպասարկում	
1.	BIOS -ի վերածրագրավորում	5000
2.	SSD փոխարինում/տեղադրում ներառյալ SSD 120GB, M.2, Kingston A400 կամ համարժեքը	25000
3.	SSD փոխարինում/տեղադրում ներառյալ SSD 120GB, SATA III, Kingston V300 կամ համարժեքը	25000
4.	HDD փոխարինում ներառյալ ՀԴ 1TB ՍԱՏԱ, 7200ռպմ (HDD 1TB SATA, 7200 rpm), կամ համարժեքը	30000
5.	HDD փոխարինում ներառյալ ՀԴ 2TB ՍԱՏԱ, 7200ռպմ (HDD 2TB SATA, 7200 rpm), կամ համարժեքը	40000
6.	Սնուցման բլոկի փոխարինում ներառյալՍնուցման բլոկ Պ4 պահարանի համար 450Վտ (Power suply unit for P4 Case 450w), կամ համարժեքը	7000
7.	Սնուցման բլոկի փոխարինում ներառյալՍնուցման բլոկ Պ4 պահարանի համար 550Վտ (Power suply unit for P4 Case 550w), կամ համարժեքը	10000
8.	Ամբողջը մեկում համակարգչի սնուցման բլոկի փոխարինում 12v-20v,3A-5A	12000
9.	Ամբողջը մեկում համակարգչի, մայրական սալիկի վերանորոգում (HP 200g3) կամ համարժեքը	30000
10.	MB փոխարինում ներառյալ 775 սոկետ ՎԳԱ օն բորդ, (775 socket, VGA on board), կամ համարժեքը	28000
11.	MB փոխարինում ներառյալ 1155 սոկետ ՎԳԱ օն բորդ, (1155 socket, VGA on board), կամ համարժեքը	35000
12.	MB փոխարինում ներառյալ 1150 սոկետ ՎԳԱ օն բորդ, Asrock H81M-VG4 (R3.0) 1150 Socket, կամ համարժեքը	35000
13.	MB փոխարինում ներառյալ 1151 սոկետ, Motherboard 1151 socket GIGABYTE B250M կամ համարժեքը	50000
14.	RAM փոխարինում ներառյալ ԴԴՌ2 1ԳԲ 533ՄՀՑ ՊՍ4200 (DDR2 1GB 533MHZ PC4200) կամ համարժեքը	8000
15.	RAM փոխարինում ներառյալ ԴԴՌ3 4ԳԲ 1066/1333/1600 ՄՀՑ (DDR3 2048M 1066/1333/1600MHZ), կամ համարժեքը	10000
16.	RAM փոխարինում ներառյալ ԴԴՌ4 4ԳԲ	15000
17.	CPU-ի հովացուցիչի փոխարինում ներառյալ Ինթել ՍՊՈՒ-ի հովացուցիչ օրիգինալ(Cooler for CPU Intel original),	8000

	socket 775/1155/1150/1151, կամ համարժեքը	
18.	CPU փոխարինում ներառյալ Քորե I3 4150, 1150 socket, կամ համարժեքը	60000
19.	CPU փոխարինում ներառյալ Քորե I3, Core i3-8100 TREY 1151 Socket , կամ համարժեքը	85000
20.	Համակարգչային ստեղնաշարի փոխարինում ներառյալ ստեղնաշար Genius KB 110 կամ համարժեքը (USB,PS/2)	5500
21.	Համակարգչային Մկնիկի փոխարինում ներառյալ մկնիկ Genius NS 120 կամ համարժեքը (USB,PS/2), օպտիկական	4500
22.	DVD-RW փոխարինում ներառյալ ԴՎԴ-ՌՎ(DVD-RW)	12000
23.	Ցանցային քարտի տեղադրում ներառյալ Ցանցային քարտ 10/100/1000 Դ-լինկ (D-link 10/100/1000), կամ համարժեքը, PCI/ PCI Express	6000
	2. Մոնիտորների սպասարկում	
24.	Դիագնոստիկա	1000
25.	Սնուցման Բլոկի վերանորոգում	5000
26.	վերածրագրավորում	4000
27.	ԼՍԴ-ի լամպի փոխարինում ներառյալ լամպը	8000
28.	Ինվերտորի վերանորոգում	6000
29.	Լեդ Լուսավորության բլոկի վերանորոգում	5000
30.	LED մոնիտորի Լուսադիոդների փոխարինում	8000
	3. Անխափան սնուցման սարքերի սպասարկում	
31.	Ղեկավարող սալիկի վերանորոգում	4000
32.	Մարտկոցի փոխարինում ներառյալ Մարտկոցը 12Վ/7Ա	10000
33.	Մարտկոցի փոխարինում ներառյալ Մարտկոցը 12Վ/9Ա	12000
	4. Լազերային տպիչների և բազմաֆունկցիոնալ սարքերի սպասարկում	
34.	Լազերային տպիչների Պրոֆիլակտիկա	4000
35.	Լազերային տպիչների վերածրագրավորում	8000
36.	Լազերային տպիչների ղեկավարող սալիկի վերանորոգում ներառյալ անհրաժեշտ դետալները, Canon-LBP6000/6030b,Canon-LBP2900/3000,HP1010,Canon MF3010/3110,LBP-1120, Canon MF4010/MF3220, mf411dw, mf244dw,M 130, M428dw կամ համարժեքը	7000
37.	Լազերային տպիչների վառարանի վերանորոգում ներառյալ անհրաժեշտ դետալները, Canon-LBP6000/6030b,Canon-LBP2900/3000,HP1010,Canon MF3010/3110, LBP-1120, Canon MF4010/MF3220, mf411dw, , mf244dw, M 130, M428dw կամ համարժեքը	15000
38.	Լազերային տպիչների մեխանիկական հանգույցների վերանորոգում ներառյալ անհրաժեշտ դետալները, Canon-LBP6000/6030b,Canon-LBP2900/3000,HP1010,Canon MF3010/3110, LBP-1120, Canon MF4010/MF3220, mf411dw, mf244dw, M428dw կամ համարժեքը	7000

39.	Լազերային տպիչների ղեկավարող սալիկի վերանորոգում ներառյալ անհրաժեշտ դետալները Xerox Phaser 3010, կամ համարժեքը	5000
40.	Լազերային տպիչների վառարանի վերանորոգում ներառյալ անհրաժեշտ դետալները, Xerox Phaser 3010, կամ համարժեքը	12000
41.	Լազերային տպիչների մեխանիկական հանգույցների վերանորոգում ներառյալ անհրաժեշտ դետալները, Xerox Phaser 3010, կամ համարժեքը	7000
42.	Քարտրիջի լիցքավորում մաշված դետալների փոխարինեում ներառյալ տոները և դետալները առնվազն 2000 էջ անթերի տպելու համար, Xerox Phaser 3010, կամ համարժեքը:	4000
43.	Քարտրիջի լիցքավորում մաշված դետալների փոխարինեում ներառյալ տոները և դետալները առնվազն 2000 էջ անթերի տպելու համար HP17A , կամ համարժեքը:	3500
44.	Քարտրիջի լիցքավորում մաշված դետալների փոխարինեում ներառյալ տոները և դետալները առնվազն 1700 էջ անթերի տպելու համար: HP12A, canon 303 canon 703,FX-9,FX-10, Canon 719,Canon 59A կամ համարժեքը	3500
45.	Քարտրիջի լիցքավորում մաշված դետալների փոխարինեում ներառյալ տոները և դետալները առնվազն 2200 էջ անթերի տպելու համար: HP13A, CanonEP25, CanonEP26,CanonEP27 կամ համարժեքը	3500
46.	Քարտրիջի լիցքավորում մաշված դետալների փոխարինեում ներառյալ տոները և դետալները առնվազն 1300 էջ անթերի տպելու համար: HP85A,HP83A,Canon725, Canon325, Canon737 կամ համարժեքը	3500
47.	Քարտրիջի լիցքավորում մաշված դետալների փոխարինեում ներառյալ տոները և դետալները առնվազն 6000 էջ անթերի տպելու համար: Canon 719H կամ համարժեքը	5000
48.	Քարտրիջի փոխարինում ներառյալ Քարտրիջ (Canon 719H, HP LaserJet 59X)կամ համարժեքը առնվազն 6000 էջ անթերի տպելու համար:	26000
49.	Քարտրիջի փոխարինեում ներառյալ Քարտրիջ (HP85A,HP83A,Canon725, Canon325,Canon737) կամ համարժեքը առնվազն 1300 էջ անթերի տպելու համար:	6500
50.	Քարտրիջի փոխարինեում ներառյալ Քարտրիջ (HP17A) կամ համարժեքը առնվազն 1300 էջ անթերի տպելու համար:	6000
51.	Թմբուկի բլոկի փոխարինում ներառյալ Թմբուկի բլոկ (HP 19a) կամ համարժեքը	11000
	5. Լազերային Գունավոր տպիչների սպասարկում	
52.	Լազերային Գունավոր տպիչների Պրոֆիլակտիկա	4000
53.	Լազերային Գունավոր տպիչների ղեկավարող սալիկի վերանորոգում ներառյալ անհրաժեշտ դետալները Samsung CLP365 կամ համարժեքը	5000
54.	Լազերային Գունավոր տպիչների վառարանի վերանորոգում ներառյալ անհրաժեշտ դետալները, Samsung CLP365 կամ համարժեքը	12000
55.	Լազերային Գունավոր քարտրիջի լիցքավորում մաշված դետալների փոխարինեում ներառյալ տոները և դետալները առնվազն 1300 էջ անթերի տպելու համար: Samsung CLT-K406S, CLT-C406S, CLT-Y406S, CLT-M406S, կամ համարժեքը	6000

	6. Պատճենահանող սարքերի սպասարկում (Լազերային)	
56.	Պատճենահանող սարքերի պրոֆիլակտիկա	7000
57.	Պատճենահանող սարքերի ղեկավարող սալիկի վերանորոգում ներառյալ անհրաժեշտ դետալները	5000
58.	Սքաների Լամպի փոխարինում ներառյալ Լամպը A4	15000
59.	Սքաների Լամպի փոխարինում ներառյալ Լամպը A3	20000
60.	Պատճենահանող սարքերի սքաների մեխանիկական հանգույցների վերանորոգում ներառյալ անհրաժեշտ դետալները Ա4	1000
61.	Պատճենահանող սարքերի սքաների մեխանիկական հանգույցների վերանորոգում ներառյալ անհրաժեշտ դետալները Ա3	1000
62.	Վառարանի վերանորոգում ներառյալ անհրաժեշտ դետալները, Canon 1018/2016/2018 կամ համարժեքը	18000
63.	Վառարանի վերանորոգում ներառյալ անհրաժեշտ դետալները, Konica Minolta bizhub 165 կամ համարժեքը	18000
64.	Մեխանիկական հանգույցների վերանորոգում ներառյալ անհրաժեշտ դետալները, Canon 1215/6216/6317/1520/7161/1600 կամ համարժեքը	8000
65.	Մեխանիկական հանգույցների վերանորոգում ներառյալ անհրաժեշտ դետալները, Canon 1018/2016/2018 կամ համարժեքը	7000
66.	Մեխանիկական հանգույցների վերանորոգում ներառյալ անհրաժեշտ դետալները,Konica Minolta bizhub 165 կամ համարժեքը:	7000
67.	Քարտրիջի լիցքավորում մաշված դետալների փոխարինեում ներառյալ տոները և դետալները Canon E-16 առնվազն 1700 էջ անթերի տպելու համար:	4500
68.	C-EXV14 տուբայի լիցքավորում ներառյալ տոները, առնվազն 8000 էջ անթերի տպելու համար:	5000
69.	TN-116 տուբայի լիցքավորում ներառյալ տոները, առնվազն 10000 էջ անթերի տպելու համար:	8000
70.	Դեվելոպերի վերանորոգում(լիցքավորում) ներառյալ ծախսվող նյութերը Minolta bizhub 165 կամ համարժեքը:	14000
	7. *Թանաքաշթային* տպիչների սպասարկում	
71.	*Թանաքաշթային տպիչի Պրոֆիլակտիկա*	5000
72.	Տպող գլխիկի փոխարինում, ներառյալ տպող գլխիկը *EPSON L805* կամ համարժեքը	75000
73.	Թանաքաշթային տպիչի լիցքավորում ներառյալ թանաքը EPSON L805 կամ համարժեքը (գույնը ըստ պահանջի) (Ծավալը՝ 180 մլ)	3000
	Ընդհանուր գին՝ հանրագումարային գին	**995000**

Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների համար պլանավորվող առավելագույն գումարը կազմում է 3000000 (երեք միլիոն) ՀՀ դրամ:

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*
*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
Ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀՀ 900011175016
ՀՎՀՀ 02204739
ՔԿ ծառայություն
Ա. Ղազարյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

Անուշ Պետրոսյան Ա/Ձ
Ք. Երևան, Արշակունյաց 5
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570004526880100
ՀՎՀՀ 49557658

Տնօրեն Ա. Պետրոսյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
« 30 » « 12 » 2020 թ. կնքված
ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-21/3 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության																
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**													
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50311120/502	համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ	«Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն													

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
Ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900011175016
ՀՎՀՀ 02204739

ԲԿ ծառայության՝
Ա. Ղազարյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

Անուշ Պետրոսյան Ա/Ձ
ք. Երևան, Արշակունյաց 5
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570004526880100
ՀՎՀՀ 49557658

Տնօրեն — Ա. Պետրոսյան
/ստորագրություն/

Հավելված 3
«30» «12» 2020 թ. կնքված
ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-21/3 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ_____
հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 2021 թ.
Պայմանագրի համարը՝
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1
«30» «12» 2020 թ. կնքված
ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-21/3 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն